



ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԵՍ
 Հատոր 2, համար 1, 2008թ.



www.ysmu.am

**ԲԱԶՄԱԿԻ ԿԱՐԾՐԱԽՏԻ ԷՊԻԴԵՄԻՈԼՈԳԻԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ
 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹԱՔՆՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԱՐԿ**

ՀԱԿՈՐՅԱՆ Մ.Է., ԱՆԺԵԼՈՎԱ Ի.Բ., ՄԱՆՎԵԼՅԱՆ Հ.Ս.

Երևանի Մ. Հերացու անվ. պետ. բժշկական համալսարանի նյարդաբանության ամբիոն,
 2-րդ կլինիկա, Երևան, Հայաստան

Տարածված կարծախտը (ՏԿ)՝ կենտրոնական նյարդային համակարգի ախտահարումով դեմիելիզացված հիվանդություն է, և հայտնի է դեռևս 18-րդ դարից: ՏԿ-ը հանդիսանում է ավելի տարածված ոչ տրավմատիկ նյարդաբանական հիվանդություն և երիտասարդների համար դառնում վաղ հաշմանդամության պատճառ:

Վերջին տվյալներով, ամբողջ աշխարհում ՏԿ-ը կարող է փասսվել մոտավորապես 2 միլիոն մարդ, այդ թվում՝ մոտ կես միլիոնը Եվրոպայում:

Սոցիալական ծանրաբեռնվածությունը և ծախսերը՝ կապված ՏԿ-ի հետ, շատ բարձր են հիվանդության երկարատևության պատճառով, վաղ աշխատունակության կորստի, անհրաժեշտ ամենօրյա օգնության, թակարժեք դեղամիջոցների անհրաժեշտության և բազմապրոֆիլ բժշկական օգնության պատճառով:

Չնայած Եվրոպական երկրներում ՏԿ-ի բարձր մակարդակի և տարածվածության, այդ հիվանդության համար ընդհանուր ընդունված գնահատման և բուժման ստանդարտների չկա: Դեռ ավելին. ավելի կատարյալ ախտորոշման կրիտերիաներն արտահայտում են ավելի լիարժեք և լուրջ իրավիճակ, քան այն, որի մասին խոստովանում են վերջին տասնամյակներին: Նկատվում է ՏԿ-ի սպառնացող մակարդակի աճ՝ Հարավային և Արևելյան Եվրոպայում, ընդունալ՝ մինչև Հայաստանը: Տվյալ հոդվածը հանդիսանում է Հայաստանում ՏԿ-ի առաջին Եպիդեմիոլոգիան հետազոտության արդյունք, որի նպատակն է՝ բարձրացնել հասարակության և բժիշկ-մասնագետների տեղեկացվածությունը, միաժամանակ, տալ խնդրի գնահատականը: